ԻՆՉՊԵ՞Ս ՈՒՆԵՆԱԼ ՍԻՐՏ՝ ՀԻՍՈՒՍԻ ՍՐՏԻ ՆՄԱՆ

Հիսուսի Օրինակը - Մաս 3

«Եվ նրանց ասեց. Գնացեք բոլոր աշխարհք, ավետարանը քարոզեցեք ամեն արարածի:» Մարկոս 16:15

«Տիրոջ աչքերը դիտում են բոլոր երկիրը, որ զորացնի նրանց որոնց սիրտը ուղիղ է նրա հետ:» Բ Մնացորդաց 16:9

Ինչպե՞ս կարող եմ ունենալ սիրտ՝ Հիսուսի սրտի նման

1. Հոգ տար այն ինչի համար, որ Հիսուսը հոգաց

«Սերով գնացեք, ինչպես որ Քրիստոսն էլ մեզ սիրեց, և իր անձը մեզ համար մատնեց:» Եփեսացիս 5:2

- **Աշխարհը**

«Նա ժողովուրդներին տեսնելով, գթաց նրանց վրա, որ հոգնած և ցիրուցան եղած էին, ինչպես ոչխարներ որ հովիվ չ'ունեն:» Մատթեոս 9:36

- **Իր եկեղեցին**

«...Քրիստոսն էլ սիրեց եկեղեցուն և իր անձը մատնեց նրա համար:» Եփեսացիս 5:25

Հիսուս: «...այդ վեմի վրա կ'շինեմ իմ եկեղեցին, և դժոխքի դռները չեն հաղթել նրան:» Մատթեոս 16:18

2. Անտարբեր եղիր այն բաների նկատմամբ, որ Հիսուսը անտարբեր էր

«Մի ուրիշին էլ ասեց. Իմ ետևիցն եկ. և նա ասեց. Տեր, հրաման տուր, որ գնամ առաջ իմ հայրը թաղեմ: Հիսուսը նրան ասեց. Թող մեռելները իրանց մեռելներին թաղեն. Իսկ դու գնա Աստծո արքայությունը քարոզիր: Մի ուրիշն էլ ասեց. Տեր, քո ետևից կ'գամ. Միայն թե առաջ հրաման տուր ինձ, որ իմ տանը բարև մնա ասեմ: Հիսուսն էլ նրան ասեց. Ոչ ով որ ձեռքը մաճի վրա է դնում և ետևին մտիկ անում, հարմար չե Աստծո արքայության համար:» Ղուկաս 9:59-62

- **Ուրիշների վրա տպավորություն թողնելու**

«Ես մարդկանցից փառք չեմ առնում:» Հովհաննես 5:41

- **Հարստանալու**

«Մարդիս ստացվածքի առավելությունիցը չե նրա կյանքը:» Ղուկաս 12:15

3. Բարկացիր այն բաների համար, որ Հիսուսը բարկացավ

«Բարկանաք՝ մի մեղանչեք.» Եփեսացիս 4:26

- **Երեխաների չբավարարված կարիքների համար**

«Նրա մոտ երեխաներ էին բերում՝ որ դպչի նրանց. Բայց աշակերտները սաստում էին բերողներին. Իսկ երբոր Հիսուսը տեսավ, բարկացավ, և ասեց նրանց. թույլ տվեք երեխաներին ինձ մոտ գան, մի արգելեք դրանց. որ այդպիսիներին է Աստծո արքայությունը.» Մարկոս 10:13-14

- **Ուրիշների արհամարված տանջանքների համար**

«Նա էլ ասեց, Եվ ձեզ օրինականներիդ էլ վայ. որովհետև դժվար տանելի բեռներով բեռնում էք մարդկանց, և դուք ձեր մատների մեկովը չեք մոտենում այն բեռներին:» Ղուկաս 11:46

4. Զոհվիր այն բաների համար, որ Հիսուսը զոհվեց

«Ով որ կամենա իր անձը ապրեցնել՝ կ'կորցնի նրան. և ով որ իր անձն ինձ համար և ավետարանի համար կորցնի, նա կ'ապրեցնի նրան:» Մարկոս 8:35

«Բարի գործեն, բարի գործերով հարստանան, առատաձեռն և կարոտներին հաղորդող լինեն: Իրանց անձերի համար բարի հիմ գանձեն հանդերձյալի համար, որ հավիտենական կյանք ձեռք բերեն:» Ա Տիմոթեոս 6:18-19